



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeoghiche.org.uk
www.styeoghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

28th February 2021

Bulletin 09/2021

Third Sunday of Great Lent—The Prodigal Son

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԲԾ ՆԱՄԱԿԷՆ 6:1-7:1

Որովհետեւ կ'ըսէ. «Պատեհ ժամանակին պատասխանեցի քեզի, եւ փրկութեան օրը օգնեցի քեզի»: Ահա՛ հիմա է պատեհ ժամանակը, ահա՛ հիմա է փրկութեան օրը:

Բնա՛ւ սայթաքում չենք պատճառե՛ր որեւէ բանի մէջ, որպէսզի մեր սպասարկութիւնը չարատաւորուի: Հապա ամէն բանի մէջ մենք մեզ կը հաստատենք որպէս Աստուծոյ սպասարկուներ, շատ համբերութեամբ, տառապանքներու մէջ, հարկադրանքներու, տազնապնդումներու, ծեծերու, բանտերու, խառնակութիւններու, աշխատանքներու, հսկումներու, ծոմերու մէջ, մաքրակեցութեամբ, գիտութեամբ, համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութեան խօսքով, Աստուծոյ զօրութեամբ, արդարութեան զրահով՝ որ աջ կողմէն ու ձախ կողմէն է. փառքով եւ անպատուութեամբ, վատ համբաւով թէ բարի համբաւով, մոլորեցուցիչներու պէս՝ բայց ճշմարտախօսներ, անձանօթներու պէս՝ սակայն լաւ ճանչցուածներ. մահամերձի պէս՝ եւ ահա՛ կ'ապրինք, պատժուածներու պէս՝ ու չենք մեռցուած. տրտմածներու պէս՝ բայց միշտ կ'ուրախանանք, աղքատներու պէս՝ սակայն կը հարստացնենք շատերը, ոչինչ ունեցողներու պէս՝ մինչդեռ տիրացած ենք ամէն բանի:

Կորնթացիներ, մեր բերանը բացուած է ձեզի, եւ մեր սիրտը՝ լայնցած: Դուք մեր մէջ նեղը ինկած՝ չէք, հապա ձեր սիրտին մէջ՝ նեղը ինկած էք: Ուրեմն, փոխարէնը հատուցանելու համար (կը խօսիմ ձեզի՝ իբր զաւակներուս), դո՛ւք ալ ձեր սիրտը լայնցուցէք՝:

Անհաւատներուն հետ անյարիր լծակից՝ մի՛ ըլլաք. քանի որ ի՞նչ ընկերակցութիւն ունի արդարութիւնը անօրէնութեան հետ, ի՞նչ հաղորդութիւն ունի յոյսը խաւարին հետ, եւ ի՞նչ միաբանութիւն ունի Քրիստոս Բելիարի հետ. կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալը անհաւատին հետ,

եւ ի՞նչ համաձայնութիւն ունի Աստուծոյ տաճարը կոռքերուն հետ, որովհետեւ դուք ապրող Աստուծոյ տաճարն էք՝ ինչպէս Աստուած ըսաւ. «Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց մէջ պիտի շրջիմ. անոնց Աստուած պիտի ըլլամ ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան»:

Ուստի ելէ՛ք անոնց մէջէն եւ զատուեցէ՛ք, - կ'ըսէ Տէրը: - Անմաքուր բանի մի՛ դպչիք, ու ես պիտի ընդունիմ ձեզ. ես Հայր պիտի ըլլամ ձեզի, ու դուք՝ իմ որդիներս եւ աղջիկներս պիտի ըլլաք, - կ'ըսէ Ամենակալ Տէրը»:

Ուրեմն, սիրելիներ, այս խոստումները ունենալով՝ մաքրե՛նք մենք մեզ մարմնի ու հոգիի ամէն տեսակ պղծութենէ, եւ կատարելագործե՛նք սրբացումը Աստուծոյ վախով:

The Epistle of St Paul to the 2 Corinthians 6:1-7:1;

As God's co-workers we urge you not to receive God's grace in vain. For he says, "In the time of my favour I heard you, and in the day of salvation I helped you." ⁴ I tell you, now is the time of God's favour, now is the day of salvation.

Paul's Hardships

We put no stumbling block in anyone's path, so that our ministry will not be discredited. Rather, as servants of God we commend ourselves in every way: in great endurance;

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Rather, as servants of God we commend ourselves in every way: in great endurance; in troubles, hardships and distresses; in beatings, imprisonments and riots; in hard work, sleepless nights and hunger; in purity, understanding, patience and kindness; in the Holy Spirit and in sincere love; in truthful speech and in the power of God; with weapons of righteousness in the right hand and in the left; through glory and dishonor, bad report and good report; genuine, yet regarded as impostors; known, yet regarded as unknown; dying, and yet we live on; beaten, and yet not killed; sorrowful, yet always rejoicing; poor, yet making many rich; having nothing, and yet possessing everything.

We have spoken freely to you, Corinthians, and opened wide our hearts to you. We are not withholding our affection from you, but you are withholding yours from us. As a fair exchange—I speak as to my children—open wide your hearts also.

Warning Against Idolatry

Do not be yoked together with unbelievers. For what do righteousness and wickedness have in common? Or what fellowship can light have with darkness? What harmony is there between Christ and Belial^b? Or what does a believer have in common with an unbeliever? What agreement is there between the temple of God and idols? For we are the temple of the living God. As God has said:

“I will live with them
and walk among them,
and I will be their God,
and they will be my people.”^c

Therefore,

“Come out from them and be separate, *says the Lord*.
Touch no unclean thing, and I will receive you.”^d

And,

“I will be a Father to you, and you will be my sons and daughters, *says the Lord*

Therefore, since we have these promises, dear friends, let us purify ourselves from everything that contaminates body and spirit, perfecting holiness out of reverence for God.*Almighty.*”

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 15:1-32

Բոլոր մաքսաւորներն ու մեղաւորները անոր կը մօտենային՝ զինք լսելու համար: Իսկ Փարիսեցիները եւ դպիրները կը տրտնջէին ու կ'ըսէին. «Ասիկա կ'ընդունի մեղաւորները եւ կ'ուտէ անոնց հետ»:

Ան ալ սա՛ առակը խօսեցաւ անոնց. «Ձեզմէ ո՞վ է այն մարդը, որ եթէ ունենայ հարիւր ոչխար ու կորսնցնէ անոնցմէ մէկը, չի ձգեր իննսունինը անապատին մէջ եւ երթար այդ կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն: Ու երբ գտնէ, ուրախանալով կը դնէ զայն իր ուսերուն վրայ, եւ տուն գալով՝ կը հրաւիրէ բարեկամներն ու դրացիները, եւ կ'ըսէ անոնց. “Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ գտայ կորսուած ոչխարս”»: Կը յայտարարեմ ձեզի թէ ա՛յսպէս ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի համար՝ որ կ'ապաշխարէ, քան իննսունինը արդարներու համար՝ որոնց ապաշխարութիւն պէտք չէ»:

«Կամ՝ ո՞վ է այն կինը, որ եթէ տասը դրամ ունենայ ու դրամ մը կորսնցնէ, ճրագ չի վառեր, տունը չ'աւեր եւ ուշադրութեամբ փնտռեր, մինչեւ որ գտնէ: Ու երբ գտնէ, կը հրաւիրէ բարեկամներն ու դրացիները, եւ կ'ըսէ. “Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ գտայ կորսնցուցած դրամս”»: Ա՛յսպէս ալ, կը յայտարարեմ ձեզի, ուրախութիւն կ'ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջեւ մէկ մեղաւորի համար՝ որ կ'ապաշխարէ»:

Ապա ըսաւ. «Մարդ մը ունէր երկու որդի: Անոնցմէ կրտսերը ըսաւ հօրը. “Հա՛յր, տո՛ւր ինծի քու ունեցածէդ ինծի վիճակուելիք բաժինը”: Ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը: Ծառ օրեր չանցած՝ կրտսեր որդին ժողկեց բոլոր բաները, մեկնեցաւ հեռաւոր երկիր մը, ու հոն փճացուց իր ունեցածը՝ անառակութեամբ ապրելով: Երբ ծախսեց ամէնը՝ սաստիկ սով մը եղաւ այդ երկրին մէջ, եւ ինք սկսաւ կարօտութեան մէջ ըլլալ: Ուստի գնաց՝ այդ երկրին քաղաքացիներէն մէկուն քով մտաւ. ան ալ իր արտը դրկեց զայն՝ խոզ արածելու համար: Կը ցանկար խոզերուն կերած եղջիւրէն իր փորը լեցնել, բայց ո՛չ մէկը կու տար անոր: Եւ ինքնիրեն գալով՝ ըսաւ. “Քանի՛ վարձկաններ կան հօրս տունը՝ հացով լիացած, ու ես հոս սովամահ կը կորսուիմ: Կանգնիմ, երթամ հօրս քով եւ ըսեմ անոր. “Հա՛յր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւդ, եւ ա՛յ արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ըրէ՛ զիս վարձկաններէդ մէկուն պէս»»: Ուստի կանգնեցաւ ու գնաց իր հօր քով: Մինչ ինք դեռ շատ հեռու էր՝ հայրը տեսաւ զայն եւ գթաց. վազելով՝ անոր վիզին վրայ ինկաւ ու համբուրեց զայն: Որդին ալ ըսաւ անոր. “Հա՛յր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւդ, եւ ա՛յ արժանի չեմ քու որդիդ կոչուելու”: Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն. “Հանեցէ՛ք առաջին պարեգօտը եւ հագցուցէ՛ք անոր, մատանի՛ դրէք անոր ձեռքը ու կօշիկներ՝ անոր ոտքերը: Եւ բերէ՛ք պարարտ գուարակը, մորթեցէ՛ք, ուտե՛նք ու զուարճանա՛նք. որովհետեւ այս որդիս մեռած էր՝ եւ վերապրեցաւ, կորսուած էր՝ ու գտնուեցաւ”: Եւ սկսան զուարճանալ:

Անոր երեց որդին արտն էր. երբ եկաւ ու մօտեցաւ տան, լսեց նուագարաններու եւ պարերու ձայնը, ու իրեն կանչելով ծառաներէն մէկը՝ հարցափորձեց թէ ի՛նչ էր այդ: Ան ալ ըսաւ անոր.

“Եղբայրդ եկաւ, ու հայրդ մորթեց պարարտ գուարակը, որովհետեւ ողջ առողջ վերստացաւ զայն”: Իսկ ինք բարկացաւ եւ չէր ուզեր ներս մտնել. ուստի իր հայրը դուրս ելլելով՝ կ’աղաչէր անոր: Ան ալ պատասխանեց իր հօր. “Ահա՛ այսչափ տարի է՝ որ կը ծառայեմ քեզի, ու բնա՛ւ քու պատուիրանդ զանց չըրի. սակայն երբեք ուլ մը չտուիր ինձի՝ որ գուարճանայի բարեկամներուս հետ: Բայց երբ եկաւ այդ որդիդ՝ որ լափեց քու ունեցածդ պոռնիկներու հետ, մորթեցիր անոր պարարտ գուարակը”: Ան ալ ըսաւ անոր. “Որդեա՛կ, դուն միշտ ինձի հետ ես, ու ամբողջ ունեցածս քո՛ւկդ է: Սակայն պետք էր գուարճանալ եւ ուրախանալ, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ու վերապրեցաւ, կորսուած էր՝ եւ գտնուեցաւ”»:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 15:1-32

The Parable of the Lost Sheep

Now the tax collectors and sinners were all gathering around to hear Jesus. But the Pharisees and the teachers of the law muttered, “This man welcomes sinners and eats with them.”

Then Jesus told them this parable: “Suppose one of you has a hundred sheep and loses one of them. Doesn’t he leave the ninety-nine in the open country and go after the lost sheep until he finds it? And when he finds it, he joyfully puts it on his shoulders and goes home. Then he calls his friends and neighbors together and says, ‘Rejoice with me; I have found my lost sheep.’ I tell you that in the same way there will be more rejoicing in heaven over one sinner who repents than over ninety-nine righteous persons who do not need to repent.

The Parable of the Lost Coin

“Or suppose a woman has ten silver coins ^a and loses one. Doesn’t she light a lamp, sweep the house and search carefully until she finds it? And when she finds it, she calls her friends and neighbors together and says, ‘Rejoice with me; I have found my lost coin.’ In the same way, I tell you, there is rejoicing in the presence of the angels of God over one sinner who repents.”

The Parable of the Lost Son

Jesus continued: “There was a man who had two sons. The younger one said to his father, ‘Father, give me my share of the estate.’ So he divided his property between them.

“Not long after that, the younger son got together all he had, set off for a distant country and there squandered his wealth in wild living. After he had spent everything, there was a severe famine in that whole country, and he began to be in need. So he went and hired himself out to a citizen of that country, who sent him to his fields to feed pigs. He longed to fill his stomach with the pods that the pigs were eating, but no one gave him anything.

“When he came to his senses, he said, ‘How many of my father’s hired servants have food to spare, and here I am starving to death! I will set out and go back to my father and say to him: Father, I have sinned against heaven and against you. I am no longer worthy to be called your son; make me like one of your hired servants.’ So he got up and went to his father.

“But while he was still a long way off, his father saw him and was filled with compassion for him; he ran to his son, threw his arms around him and kissed him.


“The son said to him, ‘Father, I have sinned against heaven and against you. I am no longer worthy to be called your son.’

“But the father said to his servants, ‘Quick! Bring the best robe and put it on him. Put a ring on his finger and sandals on his feet. Bring the fattened calf and kill it. Let’s have a feast and celebrate. For this son of mine was dead and is alive again; he was lost and is found.’ So they began to celebrate.

“Meanwhile, the older son was in the field. When he came near the house, he heard music and dancing. So he called one of the servants and asked him what was going on. ‘Your brother has come,’ he replied, ‘and your father has killed the fattened calf because he has him back safe and sound.’

“The older brother became angry and refused to go in. So his father went out and pleaded with him. But he answered his father, ‘Look! All these years I’ve been slaving for you and never disobeyed your orders. Yet you never gave me even a young goat so I could celebrate with my friends. But when this son of yours who has squandered your property with prostitutes comes home, you kill the fattened calf for him!’

“‘My son,’ the father said, ‘you are always with me, and everything I have is yours. But we had to celebrate and be glad, because this brother of yours was dead and is alive again; he was lost and is found.’”



Prodigal Son Returns

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

«Ասում եմ ձեզ, Աստուծո՛ւ հրեշտակների առաջ այսպէս ուրախութիւն կը լինի մէկ մեղաւորի համար, որն ապաշխարում է» (Դուկ. 15:10)

Անառակի կիրակին է՝ անառակ որդու աւետարանական առակով:

Անառակ որդու պատմութիւնը ժամանակակից աշխարհի ամենից տարածուած եւ անհանգստացնող խնդիրներից մէկին՝ ծնողների եւ զաւակների յարաբերութիւններին աւետարանական ակնոցներով դիտելու կարելոր մի դրուագ է:

Այս կիրակին Աստծոյ հայրական, առանց պայմանի սիրոյ մասին է, մշտական սպասումի, առանց մեղադրելու ընդունելու եւ վերադարձի ուրախութեան մասին:

Մենք բազմաթիւ պատճառներ ենք փնտրում՝ գտնելու տունը լքելու արմատները, նախկինում եղած բազմաթիւ դէպքերի շարանում պեղելու սիրոյ սառու մի առիթները: Սկսում ենք քննել ոչ միայն մեր, այլեւ ընտանիքի միւս անդամների արարքները, վերաբերմունքը նրա նկատմամբ, ով յաճախ, իբրեւ տան կրտսեր, ամենից սիրուածն է լինում, բայց եւ ամենից յաճախն է նման քայլերի դիմում՝ լուրջ խոկումի մղելով ծնողներին եւ այլոց: Յետաքրքիր է, որ տունը թողնելու, սիրելիներին նեղացնելու եւ տանից հեռանալու խնդիրը ոչ թէ աւելի վերացել կամ հարթուել է, այլ գնալով առաւել տարածուել է մի հասարակութիւնից դէպի միւսը՝ այժմ լրիւ սովորական եւ ընդունելի նորմ ընկալուելով մեծամասնութեան կողմից:

Ընդհանրապէս ի՞նչ պատճառով է մարդ թողնում իր ընտանիքը, ծնողներին, սիրելի եւ հարազատ մարդկանց: Անշուշտ, լինում են դէպքեր, երբ դա պատահում է միջանձնային խնդիրների, անհամաձայնութիւնների, կռիւների եւ վեճերի պատճառով: Բայց անարդար կլինենք, եթէ բոլոր բաժանումներն այդ անկիւնից մեկնաբանենք: Դրան վկայ են յատկապէս այն ծնողները, որոնք միշտ սիրով, խնամքով ու գուրգուրանքով են շրջապատել իրենց զաւակներին: Նրանք պարզապէս շատ լավ են պատկերացնում պատանեկան եւ երիտասարդական ներաշխարհը, աշխարհի եւ մարդկանց նկատմամբ սեփական հայեացք ձեւաւորելու ձգտումը, նոր արկածներ եւ այդ տարիքում մեծ թուացող ծրագրեր իրագործելու մղումը: Նրանք կարող են վկայել, որ շատ զաւակներ տունը թողնում են ո՛չ վեճի, ո՛չ անսիրութեան կամ ատելութեան պատճառով, աւելին՝ աշխարհի կարգի, եղած կանոնների կամ իրավիճակների դէմ իրենց զաւակների ըմբոստութեան այդ պոռթկումների ողջ ընթացքում իրենք շարունակ զգացել են նրանց անկեղծ սէրը:

Կարելոր է մանաւանդ պատանեկան տարիքի՝ մտաւոր, հոգեւոր եւ մարմնապէս հասունանալու շրջանը: Այն կարող է ճգնաժամային լինել շատ պատանեկան կամ երիտասարդական տարիք թելակոխողների համար: Կարող է ուղեկցուել ըմբոստութիւններով եւ քմահաճութիւններով, որոնց սիրող ծնողը աղօթքով միշտ սպասում է՝ հասկանալով, որ այս շրջանը կանցնի, որ համբերութեամբ է շահելու իր զաւակին: Անգամ հասուն մարդիկ են աշխարհի գիրքը նետուելու, արագ հարստանալու եւ յաջողելու գայթակղութիւնն ունենում, ինչպէս Քրիստոս է օրինակ բերում սերմնացանի առակում. **«Բսկ որ փշերի մէջ սերմանուեց, այն է, որ յսում է խօսքը, բայց աշխարհիս հոգսերը եւ հարստութեան պատրանքները խեղդում են խօսքը, եւ սա լինում է անպտուղ»** (Մատթ. 10. 22):

Ի՞նչ եւ ինչպէ՞ս անել, որ ո՛չ Աստծոյ խօսքը եւ ո՛չ էլ ծնողական խրատը մեր զաւակի սրտի արտում չլինեն անպտուղ սերմի պէս.

- Մանկուց մեր զաւակներին սովորեցնել եւ խրատել Աստծոյ խօսքով եւ որ ամենակարելորն է՝ սեփական բարի օրինակով.

- Աստծոյ օրինակով մեր սերն իրենց տալ առանց պայմանի՝ սովորեցնելով, որ մեր սէրը չի փոխում երբ մենք իրենց մանուկ շրջանում հեռու ենք պահում որոշ բաներից, երբ այժմ հանդիմանում ենք կամ խրատում՝ այդ ամենն անելով իսկապէս սիրելով, սէր ցոյց տալով:

- Կեանքում ինքնուրոյն դառնալու նրանց ձգտումը ոչ թէ ուղղակի կոպիտ զսպել, այլ առաւել օգնել եւ հաւասարի պէս վերաբերուել: Մա այն սերն է, որ անգամ հեռացած եւ մեղքի զգացումից խեղդուող զաւակին տուն է կանչելու:

Այս կիրակին սիրոյ համբերութեան մասին է, որով յաճախ համբերում, հանդուրժում եւ սպասում են ծնողներն իրենց զաւակներին, քանի որ սիրում են, սրտացաւ են, սիրոյ պատճառով առաւել գիշող եւ կարեկից են՝ պատրաստ արագ մոռանալու: **«Ուրախացէ՛ք ինձ՝ հեռ»**, - հարեւաններին եւ բարեկամներին ուղղուած այս կանչը Հայր Աստծոյ ուրախութիւնն է հրեշտակների դասերի հետ:

Այս կիրակին ոչ միայն վերադարձի կանչի, այլև վերադարձածներին ընդառաջ գնալու, գրկելու, ուրախանալու եւ Քրիստոսով մեղաւորի դարձի ուրախութիւնը բարձրաձայնելու կոչ է. **«Անմիջապէս հանեցէ՛ք նրա նախկին պատմունքներն եւ հագցրէ՛ք նրան, մատանին նրա մատը դրէ՛ք եւ նրա ոտքերին՝ կօշիկներ. բերէ՛ք պարարտ եզր, մորթեցէ՛ք, ուտենք եւ ուրախ լինենք, որովհետեւ իմ այս որդին մեռած էր եւ կենդանացաւ, կորած էր եւ գտնուեց»** (Ղուկ. 15:22-24):

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Սուրբ Կյուրեղ Երուսաղեմի Հայրապետի, Կյուրեղ եպիսկոպոսի և նրա մոր՝ Աննայի հիշատակության օր

Սբ. Կյուրեղ Երուսաղեմցին 4-րդ դարի նշանավոր հայրապետներից է: Նա բազմիցս հետապնդվել է Արիոսական հերձվածի կողմնակիցների կողմից, արքային ի վերջո վերահաստատվել է հայրապետական աթոռին: Մասնակցել է 381 թվականի Կ.Պոլսի Բ Տիեզերական ժողովին: Կյուրեղ Հայրապետի քրիստոնեական վարդապետության մասին բազմաթիվ քարոզներ ու ճառեր միջնադարում թարգմանվել են նաեւ հայերեն, իսկ Երուսաղեմի երկնականարում Սբ. Խաչի երեսման առիթով Կոստանդինոս կայսերն ուղարկած նրա թուղթն առ այսօր ընթերցվում է հայոց եկեղեցիներում: Առավել հայտնի է Կյուրեղ Հայրապետի «Կոչումն ընծայութեան» ճառերի և քարոզների ժողովածուն, որն ուսանելի է բոլոր նրանց համար, ովքեր պատրաստվում են մկրտության: Ըստ ավանդության՝ Երուսաղեմի Սբ. Հակոբ եկեղեցու Սբ. Ստեփանոս մատուռի մեջ է գտնվում այն ավազանը, որտեղ մկրտվել է Կյուրեղ Հայրապետը:

Սբ. Կյուրեղ Հայրապետի անունը Հայ Եկեղեցում հիշատակվում է երկու անգամ՝ Մեծ Պահքի երկրորդ շաբաթ օրը և 12 վարդապետների շարքում՝ հոկտեմբերի վերջին շաբաթ օրը: Սբ. Կյուրեղ Հայրապետի ժամանակակիցն է Սբ. Կյուրեղ եպիսկոպոսը (նախկին անունը՝ Հուդա): Ըստ վարքագրական աղբյուրների՝ տեղանքին լավատեղյակ լինելով, օգնել է Հեղինե դշխոյին գտնելու Քրիստոսի խաչափայտը: Տեսնելով Սբ. Խաչի հրաշագործ գործությունը, իր մոր՝ Աննայի հետ մկրտվում է՝ անվանակոչվելով Կյուրեղ: Հետագայում ձեռնադրվում է եպիսկոպոս, իսկ Կյուրեղ Հայրապետի արքայություն լինելու ժամանակ փոխարինում է նրան: Կյուրեղ եպիսկոպոսը, ենթարկվելով անասելի կտտանքների, նահատակվում է մոր հետ, Հուլիանոս Ուրացողի հետապնդումների ժամանակ: Սբ. Կյուրեղ եպիսկոպոսի և նրա մոր՝ Աննայի հիշատակության օրը նշվում է Սբ. Կյուրեղ Հայրապետի հետ միասին՝ Մեծ Պահքի երկրորդ շաբաթ օրը:

Commemoration of St. Cyril the Patriarch of Jerusalem, St. Cyril the Bishop of Jerusalem and his mother Anna

St. Cyril of Jerusalem is one of the prominent Patriarchs of Jerusalem. He has been repeatedly persecuted by the supporters of the Arian heresy, he has been exiled, and however, eventually again has become the Patriarch of Jerusalem. He has participated in the Second Ecumenical Council of Constantinople. Many sermons and speeches of the Patriarch Cyril about Christian doctrine have been translated into Armenian. His letter addressed to the King Costandios on the occasion of the apparition of the Holy Cross in the sky of Jerusalem is up to date read in the Armenian churches. Patriarch Cyril's collection of sermons is instructive and edifying for those who are preparing for baptism. According to the tradition the basin in which Patriarch Cyril has been baptized is inside the Chapel of St Stephen of the Church of St. Hakob (St. James), of Jerusalem.

The Armenian Apostolic Church commemorates the memory of the Patriarch Cyril twice during the year. St. Cyril the Bishop is the contemporary of St. Cyril the Patriarch. His secular name is Huda. According to the hagiographical sources, well knowing the locality, Bishop Cyril helps the queen Heghine (Helen) to find the Holy cross of Christ, Witnessing the wonder-working power of the Holy Cross Bishop Cyril is baptized together with his mother, Anna, and after the baptism is renamed "Cyril". Later he is ordained a bishop and during the period of exile of the Patriarch Cyril he takes his place for a time. Being subjected to severe torments, Bishop Cyril and his mother have been killed during the persecutions realized by the King Julianos the Betrayer.

Անառակի կիրակի

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ապաշխարության և պահքի մի գեղեցիկ շրջան է սահմանել հավատացյալների համար, որի կիրակիներից յուրաքանչյուրն իր անվանումն ունի Աստվածաշնչի որևէ պատմությանը համապատասխան: Մեծ Պահքի երրորդ կիրակին կոչվում է Անառակի, ըստ Ղուկասի Ավետարանում հիշատակվող անառակ որդու մասին պատմող առակի՝ (տես Ղուկ. 15:11-32) մի մարդ իր կրտսեր որդու խնդրանքով ունեցվածքը բաժանում է երկու որդիների միջև: Կրտսեր որդին իր բաժինը վերցնելով գնում է հեռու երկիր, ապրում ցոփ ու շվայտ կյանքով, վատնում ամբողջ ունեցածը:

Այս դժվար դրության մեջ նա հիշում է հայրական տունը, զղջում կատարածի համար և վերադառնում: Հայրը, տեսնելով որդու զղջումը, ուրախությամբ ընդունում է նրան: Ավագ որդին դժգոհում է, որ ինքը միշտ հոր կողքին է եղել, սակայն նման պատվի երբեք չի արժանացել: Հայրը պատասխանում է, որ պետք է ուրախ լինել, քանի որ՝ ով մեռած էր, կենդանացավ: Ավագ, կրտսեր որդիներն արդար և մեղավոր հոգիներն են, և ինչպես հայրն է անառակ որդուն ընդունում, նույն կերպ էլ Աստված է իր գիրկն առնում զղջացող մեղավորին: Առակը նաև հետևյալ խրատն ունի, որ բացահայտվում է ավագ որդու կերպարում: Ովքեր կարծում են, թե արդար են, պետք է խուսափեն սեփական անձի մասին չափազանց բարձր կարծիք ունենալուց:

Sunday of the Lost (Prodigal) Son

The third Sunday of the period of Great Lent is called the Sunday of the Lost Son according to the Parable of the Lost Son told in the Gospel of Luke (Luke 15:11-32), the content of which is the following. There was once a man who had two sons. Upon the request of the younger one he divided his property between his two sons. After a few days the younger son sold his part of the property and left home with the money. He went to a country far away, where he wasted his money in reckless living. He spent everything he had. Then a severe famine spread over that country and he was left without a thing. In that time of trouble he remembered his father's house, regretted for his reckless living and returned to his father's home. Seeing that his younger son has regretted, the father received him joyfully. Whereas the elder son complained, saying that during all those years he had worked for his father like a slave and had never disobeyed his orders, and however, he had never deserved such honour. His father answered him: "My son, you are always here with me, and everything I have is yours. But we had to celebrate and to be happy, because your brother was dead, but now he is alive; he was lost, but now he has been found."

The elder and the younger sons are the righteous and the sinful souls, and father's receiving his lost son means that in the same way God receives the regretting sinner. The allegoric meaning of the parable is in the elder son symbolizing all those who are righteous or think that there are righteous. The parable admonishes all of them not to be self-conceited.

Աղոթք ուրբաթ օրվա

Էապես բարի և ամենակարող զորություն, Տեր իմ և Աստված իմ, որ այս օրը երկրին հրամայեցիր հանել զազաններն ու անասունները, սողուններն ու չորքոտանիները՝ իրենց տեսակներով, վայրիներն ու ընտանիները, և այս օրը մարդուն ստեղծեցիր ինքնիշխան, և նրան տեր ու իշխան կարգեցիր քո բոլոր ձեռակերտների վրա, և նրան փրկության դրախտում դրեցիր՝ պահելու պատվիրանը, բայց իմն է նախահոր պատվիրանազանցությունը, որի համար արտաքսվեցինք պայծառ պատվից ու փափուկ փառքից: Մանավանդ որ, նա փոքր ու թեթև հանցումով մի անգամ խաբվեց, իսկ ես անթիվ և մեծամեծ հանցանքներով մեղանչում եմ անդադար, ուստի դատապարտվածիս համար այս օրը խաչ բարձրացար, Բանդ Աստված: Եվ արդ, աղաչում եմ քեզ, ներողամիտ ու անոխակալ Տեր իմ և Աստված իմ, ողորմիր ինձ ողորմելիիս և մեղքով լցվածիս: Մի՛ զգեսնիր պատկերս, որին փչեցիր, և մի՛ մատնիր ինձ, որ ստեղծեցիր, հավիտենական տանջանքի, քանի որ քոնն եմ, Տեր, և հույսս դու ես, և քեզնից եմ ակնկալում արձակվել հանցանքներիս կապանքից: Ուստի, Տեր, կհանգեցնես ինձ մեղքի թողության և հանցանքի քավության, և շեղվածիս մասնակից կդարձնես արդար մարդկանց և նախապես ընտրվածներին, որպեսզի նրանց հետ մշտնջենական հանգիստը մտնելով՝ փառավորեմ ամենագոր տերությունդ. հավիտյանս հավիտենից. ամեն:

(Հովհաննես Գառնեցու Աղոթքները)

Մաքրի ինձ խղճմտանքիցս, Տե՛ր (աղոթք)

Ռահ յույսի, և կյանքի ճշմարիտ ճանապարհ, հավերժ կենդանի Քրիստոս Աստված, Դու ես յույսի դուռ և բխումն ողորմության, Դու ես քաջ հովիվ և մոլորյալներին դարձնող, Դու ես մեղքերը ներող և հանցանքները քավող:

Քո հանցավոր ծառան և բազմամեղս խնդրում եմ Քո առատ ողորմությունից՝ մի հիշիր իմ առաջին մեղքերը, այլ միջիններով ու վերջիններով վերացրու ինձնից: Սրբիր ինձ սրբաբար Քո զորությամբ և ազատիր անթիվ հանցանքներիցս, մաքրիր ինձ խղճմտանքիցս և արձակիր մեղքի կապերից:

Թող ինձ իմ պարտքերը, ինչպես թողիր անդամալուծին, և արդարացրու՝ ինչպես մաքսավորին, փրկիր ինձ աններելի տանջանքից և մոլորյալիս մտքում Քո սիրելիների խորանները, որպեսզի և ես նրանց հետ փառավորեմ Քեզ, Հոր և Սուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից:

Ամեն: **ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՌՆԵՅԻ Գրառեց Տեր Հովսեփ քահանա Հակոբյանը**

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

-The 33rd anniversary of the pogroms of Armenians there will be a special memorial service and laying of wreath in memoriam of the **INNOCENT ARMENIAN VICTIMS OF SUMGAIT**.

-By Mariet and Hovsep Nazloomian for the soul of their parents and relatives the late **HOVSEP & MARIAMJAN NADIRIAN, MARGAR & ELBIS NADIRIAN, GHAZAROS & ROSE GOOLVARDIAN, ABRAHAM & ZAGHIK NAZLOOMIAN, SET & JENIK NAZLOOMIAN**, also for all the old and new deceased members of the **NAZLOOMIAN, NAHABEDIAN** Families.

-By Mr & Mrs Grigorn Melkonyan and Family for the soul of their Aunt the late **SERPUHI MELKONYAN** on the 7th day memorial, and for all the old and new members of the **MELKONYAN** Family.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.